

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мпачъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ՄԵՆԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաւրանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Թիֆլիսի հայոց Կուսակցության Անապատը խորին վշտով յայտնելով մայրապետ

ԿԱՏԱՐԻՆԷ ՓԱՐՍՄԱՆԵԱՆ ԻՇԽԱՆԱԶՆՈՒՀԻ ԵՐԱՅՆԱԲԱՐԱՐՈՒԹՅԱՆԻ

մահը, խնդրում է ազգականներին և ծանօթներին՝ չնորհ բերել ամբիօքին, որ լինելու է
սեպտեմբերի 16-ին, երեկոյան 5½ ժամին, որից յետոյ յուզարկատուրով և զէպի Կու-
սակցայ եկեղեցին: Իսկ սեպտեմբերի 17-ին, առաւօտեան 10 ժամին, կը լինի ս. պատա-
րագը, որից յետոյ կը յանձնվի հողին հանգուցեալի մարմինը Խօջիվանքի եկեղեցու
զաւթում, Բէհրուլեան մայրապետների շիրմներին կից: 1—2

ԲՈՎԱՆԳԱՎՈՐՈՒՄ

Մի նոր վեճ. Հրէայի բանաստեղծութիւնը
և իսկական վեճակը. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆԷ.
Հեռագիրներ. Պրօֆէսոր Անդրէաս Արծրունու
գրական գործունէութիւնը. Նամակ Գանձակից.
Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆԷ. Նամակ Թիւրքիայից. Նա-
մակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱ-
ԳԻՆՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻ-
ՐԱՆ. Արծրունիների տոհմը:

ՄԻ ՆՈՐ ՎԵՃ

Ո՛ւ՛մ է պատկանում կաթօլիկներին պաշտ-
պանութեան և հովանաւորութեան իրա-
ւունքն ամբողջ Արեւելքում, — ահա մի
նոր հարց, որ ծագել է Թրանսիայի և
Կերմանիայի մէջ և այժմ այդ հարցը
ոչ միայն երկու ազգերի մամուլի մէջ
խիստ բանակուի առկի է դարձել, այլ և
պաշտօնական բանակցութիւնների է առաջ
բերել երկու կառավարութիւնների մէջ:
Այդ խնդիրը սուր կերպարանք և առան-
ձին նշանակութիւն է ստանում շնորհիւ
գերմանական Վիլհելմ կայսրի առաջիկայ
ճանապարհորդութեան զէպի Պալեստին:

Թրանսիան պնդում է, թէ ամբողջ Արե-
ւելքում բոլոր կաթօլիկներին պաշտպանե-
լու իրաւունքը բացառապէս իրան է պատ-
կանում՝ ինչ ազգութեան և վերաբերե-
նայ կաթօլիկները: Եւ իր այդ պահանջը
Թրանսիան հիմնում է պատմական պայ-
մանների, անցեալի օրինակի և Թիւրքիայի

հետ զանազան ժամանակ կնքած դաշնա-
գիրների վրա: Թրանսիայի I թաղաւորի
օսմանեան սուլթան Սոլիմանի հետ կնքած
դաշնագրով Թրանսիան իրաւունք է ձեռք
բերել պաշտպանել օսմանեան կայսրու-
թեան մէջ ապրող բոլոր կաթօլիկներին:
Պարզի կոնգրէսը 1856 թ. և Բերլինի
կոնգրէսը 1878 թ. ինչ հաստատել են Թը-
րանսիայի այդ իրաւունքը և վերջապէս
կաթօլիկ եկեղեցու պետը, Հռօմի պապը,
թէ՛ 1888 թ. ինչ և թէ՛ նորեքս՝ կոնգրէ-
սերով պաշտօնապէս ճանաչեց այդ իրա-
ւունքը, յայտարարելով որ միայն Թրան-
սիայն է պատկանում կաթօլիկներին
պաշտպանելու բացառական իրաւունքը Ա-
րեւելքում: Այդ պատմական աւանդու-
թիւնների հիման վրա՝ Թրանսիան, նե-
ցուկ ունենալով պապին, պնդում է, որ
նաև սուրբ տեղերի, այն է Երուսաղէմի և
Պալեստինի քրիստոնէական հաստատու-
թիւնների պաշտպանութեան իրաւունքը
պատկանում է միայն Թրանսիային: Եւ
պէտք է տեսլ, որ Թրանսիան մինչև արե-
ւելեան հարցի վերջին ճգնաժամը, մինչև
հայկական կոտորածները, լայն կերպով
գործադրում է իր այդ իրաւունքը՝ պաշտ-
պանելով ոչ միայն կաթօլիկներին, այլ և
Թիւրքիայում ապրող միւս քրիստոնէայ
ժողովուրդներին: Միայն հայկական սոսկալի
կոտորածների ժամանակ նա դաւաճանեց
իր աւանդական միսիային, և թողլ տուեց
քրիստոնէաների անգուլթ և անխնայ ջար-

դը, որով մեծապէս վնասեց իր համբաւին
և անուան ամբողջ Արեւելքում:
Այժմ, տեսնելով որ Թրանսիան ճգն-
առում է յափշտակել այն իրաւունքը, որ
Թրանսիան վայելում է գործադրում էր
դարերից ի վեր, և Վիլհելմ կայսրի ճա-
նապարհորդութիւնը Պալեստինա մասամբ
կատարվում է այդ նպատակով, Թրանսիան
սկսել է սթափվել և յայտնել իր իրա-
ւունքները: Սակայն Թրանսիան անպայ-
ման և վճռական կերպով խտուում է
Թրանսիայի իրաւունքը՝ պաշտպան հան-
գիստաւոր Արեւելքի բոլոր կաթօլիկներին
առանց ազգութեան խտրութեան: Կեր-
մանական կառավարութիւնն արդէն իր
կիսապաշտօնական օրգանների միջոցով
հրատարակեց, որ նա հերքում է Թրան-
սիայի յաւանաւորութիւնը՝ հովանաւոր հան-
գիստաւոր Արեւելքում այն կաթօլիկներին,
որոնք չեն պատկանում Ֆրանսիական ազ-
գութեան: Ամեն մի վեհապետական պե-
տութիւն — յայտարարում է գերմանական
կառավարութիւնը — իր վեհապետական ի-
րաւունքների գործութեամբ, պարտաւոր է
պաշտպանել օտար երկրներում իրան
պատկանող հաստատութիւնները: Միջազ-
գային իրաւունքի այդ տարրական կանոնը
կարող է կասկածել դառնալ միայն այն
դէպքում, եթէ ինքը պետութիւնը հրա-
ժարվի իր այդ իրաւունքից յօդուտ մի այլ
պետութեան: Բայց յայտնի է, որ Կերմա-
նիան երբեք այդպիսի դաշնագիր չէ
կնքել Թրանսիայի հետ, ուստի և Ֆրան-
սիական յաւանաւորութիւնները գուրդ են ի-
րաւագործական որ և է հիմքից: Թրան-
սիայի իրաւունքները հիմնվում են Թը-
րանսիայի և Թիւրքիայի մէջ կնքված դաշ-
նագրի վրա, բայց այդ դաշնագիրը գորու-
թիւն ունի միայն այդ երկու պետու-
թիւնների մէջ. ոչ Թրանսիան, ոչ Թիւր-
քիան իրաւունք չունեն որ և է պարտա-
գիր կանոններ հրատարակել գերմանական
հպատակների համար առանց Թրանսիայի
համաձայնութեան: Եթէ Թրանսիան խառնվի
Թիւրքիայում ապրող գերմանական հպա-

տակների գործերին, դա կը լինի ապօրինու-
թիւն և Կերմանիայի վեհապետական իրա-
ւունքների խախտումն, ուստի և գերմանա-
կան կառավարութիւնը ստիպված է ամենա-
վճռական դիմադրութիւն ցոյց տալ այդ
ապօրինութեան:

Գուցէ իրաւագիտական տեսակէտից ի-
րաւունքը Կերմանիայի կողմն է, բայց բա-
րոյական իրաւունքը Թրանսիան՝ մեր կար-
ծիքով, կորցրեց այն օրը, երբ դաւաճա-
նեց իր աւանդական-պատմական միսիային
և թողլ տուեց կարմիր սուլթանին շատ
քրիստոնէաների հետ միասին ջարդել և
արեւելքի կաթօլիկներին, որոնց պաշտպա-
նելը՝ հանրապետութեան ուղղակի և ան-
միջական պարտաւորութիւնն էր: Թրան-
սիան չը կատարեց իր քաղաքական և
պատմական պարտքը, և դրա համար նա
կը տուժի, որովհետեւ Պարզի դիպլոմա-
տիան հազիւ թէ ոյժ ունենայ դիմադրե-
լու գերմանա-թիւրքական զաղտնի դաշ-
նագրերի հետևանքներին:

ՀԻՄԱՅԻ ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԻՍԿԱՎԱՆ
ՎԻՃԱԿԸ

Կ. Պօլսում հրէական բարբիտ սուլթանի դա-
հադարութեան օրը թիւրքերէն լեզուով մի ճառ
արտասանեց, որի մէջ Արդիւ-Համիդին անուա-
նեց Նախախնամութեան մեծ պարգև Թիւրքիայի
և նրա հպատակ ազգերի համար: Իսրայէլի դա-
ւակը արեւելեան փառապաշխարհի վեհապետ
դոյներից ոչ մէկը չը խնայեց իր վեհապետի բա-
րեմանութիւնները հռչակելու և փառաբանելու
համար: Նա հաւատացած է, որ միայն ապագայ
չնորհապարտ սերունդն է կարող քննադատել Ար-
դիւ-Համիդի «բաղաժան» մեծագործութիւննե-
րը: ասաց որ բարեպաշխարհութիւնը, այդ սքան-
չելի միապետի նման մի այլ հզօր պաշտպան ու
պատուար չունի, որ հենց այդ պատճառով Եւ-
րոպան ազան և նախանձուտ աչքով է նայում
նրան: «Բայց, փառք Ալլահին — աւելացրեց բարձ-
րապատիւ հրէան — սուլթան Արդիւ-Համիդը
իր ստեղծած հիմնարկութիւններով կարող է
քաղաքակրթութեան մի օրինակ դառնալ ամ-
բողջ Եւրոպայի համար:

Նույն էլին հասարակաց ընդարձակ աւագանում
Լողանալու ժամանակ քահանաները ծանօթու-
թիւն են գցում Գէորգ աղայի հետ և յայտնում,
որ այդ բաղանիքը պատկանում է նրանցից մէ-
կին և թէ ուղում է էժան ծախել, բայց առնող
չէ գտնում: Գէորգ աղան արդէն հաւանած լի-
նելով ջրի մեղմութիւնը, պատրաստութիւն է
յայտնում առնելու և տեղնուտեղը, աւագանի
մէջ սակարկութիւն է լինում: Բաղանիքից դուրս
գալու միջոցին քահանաներն ստանում են զբէ-
սասը ոսկի, իսկ վաճառման թուղթը պիտի
գրվի միւս օրը, երբ Գէորգ աղան կը բերել
հետը բաղանիք՝ վճարած գումարը: Քահանաները
բաղանիքից գնում են Օրթոմադա: Միւս օրը
նշանակած ժամին գալիս է բաղանիքի Գէորգ ա-
ղան, հետը բերած լինելով բոլոր գումարը, և
այստեղ միայն խմանալով, որ բաղանիքը պատ-
կանում է ոչ թէ այն տեղաբնիկներին, այլ Բէ-
րուլեան տոհմին, այլ ևս ոչինչ չը խօսելով,
լուռուռումը գնում է իր գործին և ոչ ռքի չէ
զանգատվում: Սակայն տեղաբնիկները օյրնի
համբար տարածվում է և հասնում Բեհրու-
լեանց մեղքը: Գաղթիկն աւանջը, որ շատ վշտա-
նալով իր եկեղեցու քահանաների այդպիսի վար-
մունքից օտարականի հետ, ինքը վերադարձ-
նում է Արծրունուց կորած գումարը և ներումն
խնդրում. իսկ տեղաբնիկները վերադառնում են
քաղաք բոլոր ոսկիները ծախելուց յետոյ:

Լսելով իբր թէ Արծրունի անբաւ ոսկի ու-
նի, ով որ միայն փողի պէտք ունէր, դիմում
էր Գէորգ աղային. ծանօթի և անձանքի տա-
լիս էր նա փողը անանց մուրհաբի, բայց նախ
մանրամասնաբար հարցնում էր պարագմունքը
և թէ ինչից է առաջացել պարտք առնելու կա-
րօրը, և ապա վերջը մի խրատ էր կարդում,
թէ «պարտքը գործը քանդող է և ոչ շինող»:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԻ ՏՈՂՄԸ

(Պատմական ակնարկ)

II

Գէորգ աղա Արծրունիի ծնվեց Վան քաղա-
քում 1771 թ. ին Երեմիայի և Զայիմ օրիորդի
ամուսնութիւնից: Նա սկզբում ձգտում էր կու-
սակրօն դառնալ և մտնել Աղթամարի վանքը,
բայց ծնողների համաձայնութիւնը չը ստանա-
լով, մօտ քսան տարեկան հասակում պսակվեց
Նիսիսաթէթ Յակոբեանի հետ և 1793 թ. ին Մա-
րիամ անունով մի գուտար ունեցաւ: Թէ մինչև
ամուսնանալ և թէ ամուսնութիւնից յետոյ
Գէորգը առանձին սէր է ցոյց տալիս ընկերցա-
նութեան և երազում է եղել Աղթամարում բա-
նալ ստանալ (պարսկական) և վանքի միաբանու-
թիւնը դարձնել մի ուսումնական ընկերութիւն:
Սակայն այդ բանին արգելք եղաւ նրա առե-
տրական զբաղմունքը: Իր չօր՝ Երեմիայի նախ
ձերանալու, ապա մահվան պատճառով, Գէորգը
ստիպված էր բոլորովին իր վրա առնել իրանց
առևտրական գործերի շարունակութիւնը, և
ապրանքները նշանաւոր քարանձարով պտղուում
էր այնուհետև Փոքր-Ասիայի գլխաւոր քաղաք-
ներում, անցնում էր Պոլս, այնտեղից քաղաք-
ային Եւրօպա և ապա կրկին վերադառնում
Վան: 1813 թ. ին Գէորգը Հին-Բայազետով ե-
կաւ Եջմիածին և այստեղից անցաւ Թիֆլիս:

* Այս Մարիամը մարդու է գնացել և երևանի Սար-
գիս Սանատրուկեանի, օրանց ուղեւն էր՝ Միքայէլ Սա-
նատրուկեան, Սանատրուկեան՝ գաղտնի հինգաբնիկ:

Մահեկանական աշխարհների մէջ երկար պտղու-
նուց յետոյ, քրիստոնէայ տէրութեան հովանա-
ւորութիւնը նրա համար հրապուրիչ երեաց և
առա Գէորգ աղան մտքումը դրեց բոլորովին
զաղթել Թիֆլիս: Վրաստանի մայրաքաղաքը՝
գրկախառն ընդունեց հարուստ Արծրունու և
որա ոսկիները մեծ համբաւ ստացան Թիֆլիսի
մէջ: Թիֆլիսեցիները՝ որ ըստ հիմնաւորց սո-
վորութեան, միշտ բարձրից էին նայում օտար-
երկրացի հայերի վրա և ծաղրում ու արհամար-
հում նրանց տեսակ-տեսակ անարարները տա-
լով, Արծրունու վերաբերութեամբ միշտ պատ-
կառնելով էին խօսում և «Գէորգ աղան» անուա-
նում: Զը նայելով, որ այժմ աւելի քան 65 տա-
րի է անցել նրա մահվանից յետոյ, Գէորգ ա-
ղայի անունը մինչև այսօր էլ յայտնի է թէ
Թիֆլիսի և թէ միւս տեղերի հոյ հասարակու-
թեանը և միշտ յարգանքով է յիշվում: Նայն
իսկ սկզբից նա ցոյց է տուել իրան «աղա» բա-
ռին բուն նշանակութեամբ: Թիֆլիսի փողոցնե-
րում գնալիս՝ ետևից միշտ գնում էին երկու
վանեցի ծառաներ, իսկ նրա ձիով մանգալու
ժամանակ այդ ծառաները հետևում էին պարո-
նին նրա աջ ու ձախ կողմից, ապա մի երրորդ
ծառայ գնում էր առաջից՝ ձիւ թանկագին
զարդերով պաճուճված գլուխը բռնած: Փողո-
ցով անցած ժամանակ՝ ամենքը ոտքի էին կանգ-
նում և ձեռքերը կուրծքին տանելով ողջունում:
Իսկ Գէորգ աղան ձեռքը ձախտին էր դնում՝
օսմանցից ձեռով սալաւ մտալով: Բնքը խոժոռ,
բայց խելօք պատկեր ունէր: Մեծ և կեռ քնի
վրա՝ թանձր և զէպի ձախտը բարձրացող ուն-
քերը մի լայն կամար էին կապում: Երեսին
ժպիտ շատ քիչ էր երևում, բայց երեցած ժը-
պիտն էլ միշտ հեգնական էր լինում: Քիչ էր
խօսում և շատ մտածում, բայց խօսածի մէջ

Այդ տեղեկութիւնը Կ. Պօլսից հաղորդում է «С. Петербург. Вѣдомости» լրագրի թղթակիցը և աւելացնում է, որ հրէայ կրօնապետի այդ բանաստեղծական զեղումները անկեղծ էին: «Երկրազոյտի վրա ոչ մի տեղ հրէաները այնպէս լաւ չեն ապրում, ինչպէս Ռուսքիայում: Նրանք խակական քաղաքացիների բոլոր իրաւունքներն են վայելում, ազատված են զինուորագրութիւնից և առհասարակ իրանց շատ լաւ են զգում: Բայց իր ոգևորութեան մէջ պերճախօս հետեւորը բոլորովին աչքից զոյգ էր թշուառ հայերին: Բնական է, որ ոչ մի դեր չը կատարելով պետութեան մէջ, խորթ լինելով այն իսկ քաղաքակրթութեան, որի մասին բարձր այնքան շատախօսում էր, հրէաները թիրբերի մէջ որ և է ատելութիւն չարմել չեն կարող: Իսկ հայերը բոլորովին հակառակ տարր են ներկայացնում: Վրժած պետութեան խող անկեղծներում, նրանք այնտեղ էլ ամեն լայնք գործ են դնում, որ իրանց որդիներին որ և է կրթութիւն տան: Հայերը լաւ են հասկանում, որ իրանց ամբողջ ոյժը միմիայն կրթութեան մէջ է: Բայց այս բանի մէջ էլ նրանք հրէաների նման չեն վարվում և չեն բաւականապէս միմիայն իրանց մարմնի լեզուով: Հայկական ամենափոքրիկ տարրական դպրոցում բացի մայրենի լեզուից աւանդում են և թուրքերէն, յունարէն ու ֆրանսերէն լեզուները: Թէ որքան ընդունակ են հայերը, այդ բնորոշում է այն անվիճելի փաստը, որ նրանք խօսում են թուրքերէն ամենամաքուր դրական լեզուով, շատ զեղբերում յետ չը մնալով նոյն իսկ թուրքերէն: Հայերը խաղաղ են, այժմ էլ խաղաղ են, չը նայած ծանր դրութեան, մեծ դեր խաղաղական և հասարակական կեանքի մէջ: Այս ժողովրդի կենսականութիւնը և համբերողութիւնը դարձանալի են: Նրանք հար են գտնում գոյութիւն պահպանելու, չըջարտված լինելով ամեն տեսակ դժուարութիւններից: Ասելով նրանց, թուրքերը այնու ամենայնիւ, չեն կարողանում առանց նրանց շնորհ շնորհալի: Չն խօսելով մասնաւոր հիմնարկութիւնների մասին, ուր յաճախ բոլոր ծառայողները, զինվորացի սկսած մինչև դռնապանը հայեր են, նրանք դեռ մօտ անցեալում նշանաւոր տեղեր էին գրաւում և Բ. Դուան մէջ: Ինչ վերաբերում է գրականութեան, անխաղ կերպով կարելի է ասել, որ չը կայ թուրքերէն մի հրատարակութիւն, որին չը մասնակցէին երկու-երեք հայեր: Ի հարկէ, նրանց դրութիւնը անմասնաձեւ է և այստեղ: Բաւական չէ որ նրանց վրա մշտապէս կանգնած է ցեղորի սուրբ խնդիրը: Նրանք անհամբար ասում են «այդ են տալիս, լոյս չեն տալիս»: Այժմեան ժամանակ նրանց գործերը վատ են գնում, այնքան վատ, որ զարմանալու բան չի լինի, եթէ մօտիկ ապագայում նորից հայկական արհեստ թափվի հին Ստամբուլի փողոցներում: Մտնել մօտ տեղի ունեցած կոտորածների ակնթիւմը զանազան լուրեր են պարտում: Ջահերի թիւը դեռ չէ պարզված, յամեն-

Մի օր եկել էին Վեդուպ աղայից փող փոխ առնելու: Մի հայ և մի վրացի իշխան: Հայը խնդրում էր 30 ոսկի, վրացին՝ 20: Վեդուպ աղան իր խրատները կարգալուց յետոյ, տուեց հային 20 ոսկի, իսկ վրացուն 30: Երկուսն էլ կարծեցին թէ Արծրունին սխալվեց և չլիտեց մէկի խնդրածը միւսի հետ:

— Եւ չը սխալվեցի, բացատրեց բնածիւծալը երեսին Վեդուպ աղան, հրամանքդ հայ ես և 30 ոսկու կարեւորութիւն ունիս, բայց քանի որ պարտքը վատ բան է, կը յուսամ, և հաւատացած եմ, որ երբ հայաբար վարվես ոսկիների հետ—30-ի կարծող կարող պիտի լինես 20-ով ծածկել: Իսկ այս գիրքին (վրացին) շարունակեց նա, կը կարծէ թէ 20 ոսկով պիտի կատարէ իր գործը, բայց ես 30 կառավարեմ, առաջուց գիտեմալով՝ որ այն էլ չի բաւեր...:

Կառավարչապետ Նրմալով թիֆլիս մտնելով գտաւ սրան քարտեզան: Նրա սկզբնական և զլխաւոր զբաղմունքներից մէկը եղաւ չինեւ թիֆլիսը: Հասկանալի է, թէ սրբան համակրութիւն պիտի վայելէր կառավարչապետից ամեն մի անհատի ձեռնարկութեան, որ նմանապէս պիտի ծառայէր թիֆլիսի վերաշինութեան և գեղեցկութեան: Նրմալովի ժամանակ ամենաբնականաբար և մինչև այժմ նշանակութիւն ունեցող մասնաւոր ձեռնարկութիւնները եղել են Արծրունու քարտեզագրան Սիւնի մօտ մի կողմից, և Ներսիսեան դպրոցի շինութիւնը իր խանութներով—միւս կողմից: Երկուսն էլ իր ժամանակին մեծ դուռնակներ են կանգնեցնում տէրութեան որ և է օժանդակութեան, և երկուսն էլ քաղաքի գեղեցկացնող ամենանշանաւոր շինութիւններն են համարվել զո՛նք մինչև դարուս յիսուսական թ.ականները: Թէ օտարազգի և թի-

նայն դէպս ենթադրելու հիմը կայ, որ նա բաւական պատկառելի է: Քրքերը երբեք կիսատ գործ չեն տեսնում: Երկի այս կատակաւոր լուրերի պատճառով էր որ հայոց պատրիարք Օրմանեան այցելեց մեր ամենակարող Փաբսիմ-բէյին և ինչ որ երկար խօսակցութիւն ունեցաւ. նրա հետ: Լաւ միջոցով ունեն հայերը ի դէմս այս պաշտօնական բռնաւորի: Փոքր-Ասիայի մէջ տեղի ունեցած անկարգութիւնները կարելի է բացատրել երկու հիմնական պատճառներով: Առաջինը և ամենապոխտորը—դա տեղական բնակիչների անտեսական բարեկեցութեան կատարեալ անկումն է: Այ թիւրքը, ոչ բուրգը, իրանց ատելութեան շնորհիւ, չեն ուղում հասկանալ թէ ինչ նշանակութիւն ունի հայն իրանց համար: Երկրորդը տեղական ընդունակութիւնը չունենալով, և զլխաւորապէս դարաւոր ծուլութիւնից տառապելով, նրանք չը գիտեն թէ ում գլխին թափեն իրանց բարկութիւնը: Միջոցաւ հայը, չը նայած իր բոլոր թշուառութիւններին, աշխատանքով և համբերութեամբ մի կարծ միջոցում ինքն իրան չիտում է: Եւստ գեղեցիկ իմանալով թէ ինչ ընդունակութիւնների տէր է հայը, Փոքր-Ասիայի մուսուլմանները սարսափահար դարձան, երբ լսեցին թէ տարի ու կէս առաջ Առկաս փախած հայերը վերադառնում են: Նրանք տեսան որ պիտի յետ տան այն ամենը, ինչ իւրել են այդ ժամանակի ընթացքում: Վերադարձնելով հայերին նրանց տներն ու հողերը, այդ մարդիկ կը մնային անտուն-անտեղ, որովհետեւ իրանց սեփականութիւնն արդէն տեղափոխել երկրի են այդ նոր տեղերը: Եւ ո՞վ կօղէ հայերին, ո՞վ կազատէ նրանց բռնութիւններից:— Կառավարութիւնը, բայց նա շատ է զբաղված ուրիշ գործերով, շատ է ոգևորված դերմաստիւթութեամբ և չէ կարող ուշադրութիւն դարձնել այդ զբաղանքների վրա: Սակայն մեղադրել Բ. Դուան շատ էլ իրաւացի չի լինի: Որտեղից նա փող վերցնի, երբ բոլոր միջոցները վատնւած են դերմաստեղական կայսրի ընդունակութեան համար: Վերամասնացիների հետ բարեկամութիւն անելը աւելի կարեւոր է քան ինչ որ հայեր: Եւ Բ. Դուան շատ էլ չէ անհանգստանում. նա գիտէ չոր դուրս գալ ամեն տեսակ դժուարութիւններից: Դրա լաւ ապացոյցը ուսուցիչ դեսպանի կտրական յայտարարութիւնն է, որ ուշադրութիւն դարձնելով վերադարձող հայերի վրա՝ Այժմեան հանցին, խօսեցին այս մասին և հանգստացան:

Ռուս լրագրի վերջացում է այսպէս՝ «Այս առաջին անգամը չէ որ Բ. Դուան խաբարում է: Կը գրեն մի թուղթ, երկրորդը, երրորդը, կը կարգեն նրանց, կուղարկեն պաշտօնեաներին, նրանք էլ նկատողութիւններ կը գրեն լուսանցների վրա: Թղթերը նորից կը վերադառնան մինիստրութեան, նորից նրանց կը սկսեն արտագրել—և այսպէս անվերջ»:

Ռուսաց աշխարհագրութեան ձեռնարկներում անգամ թիֆլիսի վրա խօսելիս, սրա նշանաւոր շինութիւնների մէջ գրեթէ առաջին տեւն են բռնում Ներսիսեան դպրոցի շինութիւնը և Վեդուպ աղայի բարձրադասարան, ուր, ի դէպ է ասել, թիֆլիսը խնդրեց տուեց 1851 թ.ին Փաշա-ժառանգ Ալեքսանդր Նիկողայեւիչին (յետոյ կայսր Ալեքսանդր II):

1816 թ.ականի վերջերին Արծրունին առեւորական գործերով գնաց արտասահման: Պտըտելով Եւրոպայի զանազան քաղաքները, նա իմացաւ որ Աստուրգամում հայոց եկեղեցու շինութիւնները մէջ պահված է դեռ անցեալ դարում բանող (Ուկրաինի և Վանանդեցու) հայ արւարաւոր իր բոլոր պարագաներով: «Եւ լուսաւ վառն ունի տղարանի հայոց լինելը յԱմստերդամ քաղաքի ի ներքոյ կնքող Նապոլեօն Բօնօ-փարթի՝ առ ուրումն Հոլանդացու՝ հասանէ (Արծրունին) անոր, և ոչ ինչայեալ զգին այնորիկ կամ զմասին ընդ ցամաքային երկար ճանապարհորդութիւնս, ինքնայորդոր սիրով ազգական բարեբարութեանց գնեալ զայն զպողոստիկ և զպոլիսեայ նախագահապարսն հայր և ժայր կոչեցեալ՝ հանդիմը բաւական կապարեայ ձուլեալ ձագուր, և ինչ ինչ պարագաները գործարանին և բերեալ ընդ իւր ի Տիֆլիս ընծայէ նորակերտ (Ներսիս) ուսումնարանին: (Տես) Քերականութիւն Միք. Չամբան. Թիֆլիս, 1826 յիշատակարան): Այս ընծայարկութիւնը սերտ կապով կապեց Ներսիս Աշտարակեցուն Վեդուպ աղայի հետ, որի անունը աւելի եւ հռչակվեց թիֆլիսի հայերի մէջ: Այս տղարանը կուլեցաւ «Գարան Ուսումնարանի Հայոց ընծայեցելոյ յաշտական Վեդուպ Ներսիս Արծրունու: Եթէ չը հաշվել այն փոքրիկ տղարանը, որ կար գինուորական վարչութեան ձեռքում պաշտօնա-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՀԵՌՈՒԹԻՆԵՐ (Սեփական)

Մեզ հեռագրում են Հոնկոնգոնէֆից (Գերմանիա), սեպտեմբեր 14/26-էջ, հետեւեալը.

«Անգլիէս Արծրունու հոգեհանգստի հանգրէս կառարկեց երէկ, սեպտեմբերի 25-ին, երեկոյեան 6 ժամին, Հօնկոնգոն, ներկայութեամբ ըկտորի, պրօֆէսորների խմբի, ուսանողների բազմութեան, նախկին աշակերտների և մտերիմ բարեկամների: Կազարի վրա բազմութիւն շքեղ պսակների թւում զբաղւած էր և մի փառաւոր պսակ Պետերբուրգի «Միներալօգիական ընկերութեան» կողմից՝ ընկերութեան անդամ Բօմանօվսկու ձեռքով: Կամբանական ձառ խօսեց Հօնկոնգի բողոքական քահանայ Բէօրիզը, բնաբան ընտրելով Յակոբոս առաքելայի ողբից՝ գլուխ Ա. 12—«Երանեալ է այդ, որ համբերեց փորձանաց»: Նկարագրեց հանգուցեալին՝ իբրեւ մի մարդու, որ սիրում էր իր ժողովուրդը, որի հետ և կրեց նրա ծանր, վշտայից կեանքը, նկարագրեց նրան իբրեւ զիտութեան մարդու, իբր իր աշակերտների բարեկամի, և վերջապէս յիշելով նրա ազնիւ ոգին և բարձր զգայունքները: Հանգէսը, որին ներկայ էին բողոքականներ և կաթօլիկներ, վերջացաւ՝ ամենայն ըրիտունէից հաւատարմականօք և օրհնութեան արօթբով: Մարմինը զբաղւած է Հօնկոնգի կապելայում՝ մինչև Թիֆլիս փոխադրվելու»:

ՊՐՈՖԵՍՈՐ ԱՆԴՐԵԱՍ ԱՐԴՐՈՒՆԻՈՒ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆԹԻՆԵՐ

Մենք ասացինք, որ երիտասարդ գիտնական Արծրունին մեր երկրը եկաւ, որպէս զի իր ոյժերը նուիրէ իր ազգին: Բայց հայրենի խաւարն այն ժամանակ էլ շատ թանձր էր և եռանդով չի երիտասարդին գործելու առաջադէպ չը տվեց: 1873 թ.ի գեղեցիկներին Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը ձայների բազմութեամբ տեսուչ ընտրեց. սակայն առաջ եկան հայկական ինտրիգներ, այն ժամանակվայ թեմական առաջնորդ Մակար եպիսկոպոսը զանազան խոչընդոտներ յարուցեց, և անց գործելու եռանդով վառված մարդը հարկադրված եղաւ հեռանալ հայրենիքից, ուրիշ աւելի բարեկամող ասպարէզ օրհնել իր տեսչանքներին բաւարարութիւն տալու համար: Նա 1875 թ.ին ձախ ապարկեց Ստամբուլը, որ համալսարանում հանգաբարձութեան պրօֆէսոր Գրօթի օգնականի պաշտօն էր ստանձնել: Եւ Արծրունին միակ օրինակը չէր: Տխուր իրողութեան ազդեցութեան տակ Գրիգոր Արծրունին գրեց իր գեղեցիկ առաջնորդներին մէջը՝ «Գաղթեմք, միշտ դադ-

կան լիվթեր տպելու համար, այն ժամանակ սա պիտի համարվի թիֆլիսի անդաւնիկ տղարանը: Վեդուպ աղայի համակրութիւնը Ներսիսի ձեռքում մնեցին և նրա ձեռնարկած գործերին այնքան մեծ էր, որ երբ 1829 թ.ին Ներսիսի Բնաբարձու ուղարկած ժամանակ նրա դպրոցը մնաց յանկարծ անխնամ և անպաշտպան և պիտի դրդվէր դրամական նեղ դրութեան պատճառով, Արծրունին յանձն առաւ թէ ուսումնարանի կառավարութիւնը և թէ բոլոր ծախսը ուսուցիչների և միւս պաշտօնեաների:

Պարտք եմք համարում կանգնել Վեդուպ Արծրունու դրաւոր աշխատութիւնների վրա ևս: Եւստերին գուցէ յայտնի է նրա յօրինած և 1830 թ.ին տպագրած «Դարաստան խրատուց» անունաւ աշխատասիրութիւնը, որ այժմ հաւաքուիտ է համարվում: Յաւաճաբանից յետոյ հեղինակը գետնեղ է մի ոտանաւոր «Բան առ վերմանդ» անունով, որի զլխատառերը կազմում են «Ի Վեդուպ Արծրունու: Այստեղ Վեդուգը պատմում է իր գլխի անցածները»:

... Գաւն ամենիւր երկու ընդ նմին ելել իմ երկէջ պանդխտի ընդնէ... Երբեք ընդ ողորտ եւր հողազնեմուն Բնաբէ ինձ տեղի բնակիչ ի նմին յաւիտ մասն ընդ Պարսկաստանին, և Պարսից ծովէ Մարմարականին, և Կասպից ծովէ ցլեւը Պոնտոսին, Բաքու և վարս աղբաջն առի ի զնին: Բուզ է երբ երեւոյ նկարը եմ գրչին, Վերաւաւոր տանին յեւրոպ աշխարհին, Համբաւ իմաստեց օրը հաշակեցին, Կրթութիւն անձանց և հանձնը նոցին: Միւր լայնածաւալ է Ռուսաստանին, Իտալ, Գերմանիա ընդ Գաղղիային, Անգլիա, Հոլանդիա ընդ Բօլոնիային, Եւրօպիոյ Ապան ընդ Աւստրալիային... և այլն: Ահա որքան երկրներ է պտըտել Վեդուպ Արծ-

թեմք» վերնագրով, որ այժմ էլ արժանի է ոսկի տառերով արձանագրելու: Չենք կարող գրկել մեզ այդ յօդուածից մի բանի՝ կտորներ առաջ բերելու հաճոյքից: Ահա ինչ էր պրոֆ տաղանդաւոր հրապարակաւորը.

«Դարձեալ մի երիտասարդ, եւրօպական կրթութիւն ստացած, թողնում է մեր երկրը և գնում է օտար երկիրներ, իր ստացած հմտութիւնները գործ դնելու համար:

«Մեր երիտասարդները գալիս են մի քանի ժամանակով, տեսնում են որ գործադրութիւն չը կայ իրանց հմտութիւններին—և կրկին գնում են: «Ո՞վ է մեղաւոր...»

«Իրանք: «Նրանք պիտի դիտենային, որ մեր երկրում ոչ թէ միայն հարկաւորութիւն չը կայ բուն գիտութեան, բայց և տեխնիկական արհեստները պիտի բոլորովին գործադրութիւն չեն գտնում մեզ մօտ:

«... Սկան զինեղործներ և գիւղատնտեսներ,—ինչ հարկաւոր են մեզ զինեղործներ, ինչ հարկաւոր է մեզ գիւղատնտեսութիւն: Եկան բարձր բազմաբունտեան դպրոցում աւարտած երիտասարդներ,—ինչ հարկաւոր է մեզ երկրագործութիւն... վերապէս եկան հանգաբարձներ,—ինչին են պէտք մեզ հանգաբարձներ:

«Ուղում էք մնալ ձեր սիրելի հայրենիքում, կանխում էք որ ընտանիքը ձեզ գնահատէր, որ հասարակութիւնը ձեզ ընդունէր,—պիտի սովորէր բնականաբար արհեստներ, որ ոչ բուն գիտութեան, ոչ էլ նրա տեխնիկական գործադրութեան վրա են հիմնված,—պիտի սովորէր կօշիկներ կարել, չոր ձեռք ու կարել, ձի նայել...»

«Իսկ դուք վերադառնում էք ճշմարիտ գիտութիւնով, վերադառնում էք տեխնիկական, բազմաբունտեան հմտութիւններով... ումից էք սովորում օգնութիւն... հասարակութիւնից,—ծիճաղելի բան է:

«Ունենալով գիտնական, տեխնիկական հմտութիւններ, աւելորդ էք դեռ ևս մեզ համար... մի ամենատարր և ապրուստն ապահովայող արհեստ էլ չը գիտէք... պէտք է կրէք ձեր առած սխալները պատկեր:

«Սխալմունք,—ոչ, յայնցանք: Այդ յայնցանքը նրանումն է կայանում, որ դուք հաւատաւոր մեր հասարակութեան խոստումներին, և չը գիտէք որ խաբված էք...»

«Դուք սխալվեցաք, պէտք է կրէք ձեր արած սխալները պատկեր,—և պէտք է գաղթէք...» Երկի հայի ճակատագիրն է գաղթել, անդադար գաղթել... որովհետեւ հայ հասարակութիւնը վճռել է մնալ անխաբ, երդվել է յաւիտեանական հաւատարմութիւն անխաբութեան գաղթաբարին...:

«Իսկ ինչ որ յայտնվում է նրա մէջ նոր, թարմ, առաջ մղող, զարկ տուող,—նա պէտք է դուրս գցվի, աքսորվի, ժպղծվի նրա միջից...»

«Մեր ժամանակակից հայ հասարակութիւնը կարծում է, որ կարող է հայ մնալ միայն մի

րունին, ուր խոր խոցվել է նրա սիրտը, տեսնելով որ այդ երկրների բնակիչները մի օր բոլորովին տղտ են եղած, իսկ այժմ նրանք կրթված և լուսավորված, այն ինչ մեր հայերը տակաւին տղտութեան մէջ են: «Դարաստան խրատուց» գիրքը թէ ևս տղտագրութեան անդրանիկ աշխատութիւնն է Վեդուպ Արծրունու, բայց նա ունեցել է և ուրիշ գործեր: Գծախոտաբար Արծրունու այս աշխատութիւնները ոչ միայն չը տղտագրվեցան, այլ և անյայտ են մնացել մինչև այժմ:

Ինչպէս երևում է «Դարաստան խրատուց» հաղիւ լոյս էր տեսել, որ Վեդուպ աղան յանկարծակի վախճանվեց 1830 թ.ականի խօրհրայից: Այդ սարսափելի հիւանդութիւնը վրա հասաւ թիֆլիսում 1830 թ.ի ամառը և այնպիսի մեծ ջարդ տուեց քաղաքում, որ հետագայ տեւրունները տուլին դրան «մեծ խօրհրայի» տիտղոսը: Հիւանդութիւնը երկաւորց յետոյ, քաղաքացիք շտապեցին փախել լեռնային կողմերի գիւղաբայրը և զով տեղեցին, իսկ Արծրունին չուցեց հեռանալ ոչ մի տեղ և ապահովութեան համար ընտրեց իր քարվանդարայի ներքին յարկի այն տնեակներից մէկը, որի պատուհանները բացվում են Կուր գետի վրա: Ահա այստեղ, յարկաբաժակի, ըսովից խօրհրային և Վեդուպ աղան կարճատեւ հիւանդութիւնից յետոյ վախճանվեց, անկարող լինելով մինչև անգամ որ և է կտակ անելու: Նրա միակ որդի Ներսիսն նոյն միջոցում գտնվում էր Թէհրան Ռուսաց իշխան Դոլգորուկովի զեպաւանի հետ և վերադարձաւ թիֆլիս միմիայն 1830 թ.ականի վերջերս:

(Կը շարունակվի)

պայմանով, այն է անշարժ մնալով: Իսկ եթե մի որ և է շարժում, առաջարկություն ընդունեց, — նա այլ ևս իրան հայ չէ համարում...

«Հետևեցե՛ք, հետևեցե՛ք այդ գովելի յատկությունը, դադարեցե՛ք, ստիպեցե՛ք ձեր վարձուներով դադարեցե՛ք օտարություն մէջ այն բոլորը, ինչ որ բացառություն ձեր մէջ յայտնուում է՝ նոր, իմ արմ, առ ողջ, բարոյապէս և մտաւորապէս բարձր:

«Բայց չը մոռանա՞ք որ վերջը դուք ինքներդ կը պատժվեք այդպիսի հակաընկերական վարձուների համար...

«Բիտեմ, հասարակութիւն, քո վարձուները քո որդիների վերաբերութեամբ ինչպէս է անուանվում՝ հասարակական անձնասպանութիւն»։ (Մշակ, 1875, № 10):

«Վաղեմականը», հաստատվելով Ստրասբուրգում, թղթակցութիւններ մի հեղու է թափում «Մշակի» էջերի մէջ: Չը պէտք է կարծել թէ Անդրեաս Արքունիսն մի ստանաւոր մասնագետ էր, որ գրում էր գիտականին յատուկ պաշտօնով: Ոչ. նրա մէջ էլ յաճախ բռնկուում էր այն կրակը, որ այնքան ոյծ ու կարողութիւն էր հարգելու նրա հուշակաւոր եղբոր ջիւտը, կայծակնաւոր գրչին: Ան ինչ գրում է մահացողական վախճանով երկրաստար գերմանացի Ա. Ֆոն-Արկէն, որ թղթակցութիւններ էր գրում «Մշակին»:

«Նա մտաւոր պատերազմով տրպն էր», — գրում էր Անդրեաս Արքունիս. — «բայց դժբախտաբար բնութիւնը, որ շատ անգամ սխալվում է, սխալվել է և այդ գէպը: Այդքան ընդարձակ և այդքան բազմաոտեսակ ընդունակութիւնների տէր մարդուն, մարդկութիւնը ամբողջ սրտով սիրող և մի և նոյն ժամանակ անխնայ թշնամի ամեն նախապաշարմունքի և մոտարկաւորութեան, — այդ տեսակ մարդուն, որ մի ձեռքով բռնած ունէր գիտութեան դրօշակը, իսկ միւս ձեռքով պիտի պատերազմէր խեղդող ընտանեկան տիրապետութեան դէմ, բընութիւնը տուեց մի թոյլ և ընթրչ մարմին... Այդ տեսակ մտաւոր պատերազմովին հարկաւոր էր և հակադէմ ամբարձրումը:

Հանգուցեալ մասին նա ասում էր. «Այսպէս էր՝ որ նա մեր մասնաւոր խօսակցութիւններից տեղեկանալով մեր հայերիս նոր գրականութեան աղքատութեան մասին, ուրախութեամբ յանձն առաւ աշխատակցել «Մշակին»: Այսպէս էր՝ որ մեզ համակերպել, սկսեց մեր օգնութեամբ թարգմանել և թարգմանեց Ռաֆայէլ Պատկանանի մի քանի բանաստեղծութիւնները գերմաներէն ոտանաւորներով: Մի գործ, որ պատիւ էր բերում թէ երկուստեք գերմանացուն և թէ նրա բարեկամ Արքունիսն:

Գրելով մեծ մասամբ տնտեսական հարցերի մասին, Արքունիսն գործ էր դնում և կծու, հարուածող լեզու. նա էլ իր եղբոր պէս գիտէր սրտայայտել արդար զայրոյթ: Այսպէս, մենք գտնում ենք նրա նամակներից մէկում մի այսպիսի կտոր.

«Այս բոլոր պայմանները, որոնք արդիւնք են մեր երկրի ժողովրդի անխնայութեան, նախապաշարմունքների, կամակորութեան, անհողութեան, անշարժութեան և ձեռնարկութեան ողորդ խաղաղ բացակայութեան, ի հարկէ հազար ու մէկ արդեւ ինչ դառնում անհեշտ նորութեան, արդիւնաբերութեան ամեն նոր ճիւղի մտցնելուն մեր երկրում: Մեր ժողովուրդը բոլորովին երեխայական դրութեան մէջ գտնվելով, ցոյց է տալիս երեխայական բնաստորութեան անմշտն յատկութիւնները. նա միշտ պատրաստ է լաց լինելու իր դրութեան մասին, երբեք գոհ չէ, և ոչ թէ անպէս դժգոհ է ինչպէս մի մարդ, որ գէպի առաջ է ձգում, — «ոչ, նա լալիս է, բայց մի քայլ, մի շարժումը չի անի, որ իրան վնասող պայմանները հեռացնի կամ գոնեա հեռացնելու աշխատի: Նա լալիս է, որովհետեւ լաց լինելը նրա բնաստորութեան ամենից շատ համապատասխանող դրութիւնն է: Առաջարկեցե՛ք նրան միջոցներ, որոնց մասին նա ինքն էլ շատ լաւ գիտէ, թէ օգտաւէտ են՝ նա ձեռք կը պատասխանի՝ «ես ինչիս այդ անեմ, եթէ մեր գիւղումը ոչ ոք այդ չէ անում»: — Սա ինչիս պարտքնեմ գետնին, եթէ ոչ ոք չէ պարտաւորեցնում: Նա այդ կասի, թէ և փորձով գիտէ, որ պարտաւորացած գետինը շատ անելի պողպատ է: — Աւելի յարմար չէ ոչինչ հողը չը տանել և դանդաղել, լաց լինել, որ երկիրը անպտղաբեր է, որ գետինը պակաս է, որ նա չէ կարող իր աւերող ընտանիքը կերակրել իր աշխատանքով, թէ և իր բոլոր ոյծերն էլ գործ դնէր»։ (Մշակ, 1875, № 35):

Գալի առ քայլ հետեւեց այդ նամակներին մենք, ի հարկէ, հարաւորութիւն չունենք, այնքան բազմաթիւ են նրանք: Որքան բազմապէս, հարուստ բովանդակութիւն ունեն նրանք. մի թե-

կն ակնարկ գցելով նրանց վրա, ձեր առաջ երեսն է դալիս մի մարդ, որ դիտելու մեծ ընդունակութիւն ունի, որ գիտէ ըմբռնել, թէ իր դիտանքներից որն է հետաքրքրական իր հայրենակիցների համար: Զարմացում է այդ անշնչեւանդը: 1876-ի ամառը նա ճանապարհորդում է Շվեյցարիայում և Իտալիայում և համարեա ամեն մի ինկանից, ամեն մի քաղաքից նամակներ է ուղարկում. ամեն մէկի մէջ նա մի նոր բան ունի պատմելու. թե՛ ինչ, գրաւիչ լեզուով նկարագրում է կեանքը, ընդգծում է ամեն մի փաստ, որ գրաւում է նրա ուշադրութիւնը. նա շատ լաւ գիտէ որ իրանից հեռու, ասիական մի անկիւնում, կայ մի խեղճ, «երեխայ» ժողովուրդ, որին պէտք է կրթական բաներ ցոյց տալ: Երբեմն գրում է մի հետաքրքրական գրքի մասին, երբեմն անցնում է քաղաքական հարցերին, աշաւորջ հսկում է թէ որտեղ ինչ են խօսում հայերի մասին: Այդ հարուստ, բազմակողմանի բովանդակութիւնը պատկերացնում է գրողի եռանդուն, վառվառն բնավորութիւնը: Նա հանդիստ չունի, նա ուզում է ամեն ամեն ինչ, տալ յարեցնող, պարարտ նիւթ: Ս. Բիւնչ անի: Այդ նամակների միջոցով է նա կարողանում ծառայել իր ժողովրդին: Մի տեղ գանգատվում է իր մեղսակցութեան վրա և ասում է որ Թիֆլիսից ստացած իւրաքանչիւր նամակ, իւրաքանչիւր գիրք անշնչա ուրախացնում է իրան: Հասնում է 1877 թվականը, մի անմոռանալի ժամանակ...

Լէօ

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Օգոստոսի 26-ին

(Վերջ)

3) Անդամ և գանձապահ կառավարութեան Սիմէօն քահանայն 1895 թվի սեպտեմբեր ամսին աճուրդով ծախած ամրագրութեան այդի խաղաղ գոյացած 1900 թ. 50 կոպ. չէ գրում մտից ցուցակի մէջ: Կառավարութիւնը 1897 թ. փետրեար ամսին հրամանագրում է նրան 1900 թ. 50 կոպ. գրել ի մուտ ի տուժարի օտարացին գրանցել և յետոյ այդ գումարից ծախս հանել 1200 թ. և տալ Աղայեանցին, իսկ մնացեալ 700 թ. 50 կոպ. ուղարկել սիւնդիկին: Սիմէօն քահանայն կառավարութեան հրամանը մինչև 1897 թվ. յունիս ամիսը չէ կատարում և երբ հարց է տրվում նրան, թէ ինչու է անկատար թողում նա կառավարութեան հրամանը, բերանացի պատասխանում է, թէ կառավարութիւնը պարտ է տալ Աղայեանցին 1600 թ. և ոչ թէ 1200 թ. ինչպէս հոգեւոր կառավարութիւնն է ուրիշ, անկայնելով յանձնաժողովի վճռած 900 թ. ծախսի վրա 300 թ., որպէս վարձ Աղայեանցի, և թէ ինքը Տէր-Սիմէօնն արդէն վճարել է Աղայեանցին 1600 թ. արքի:

4) Տէր-Սիմէօն քահանայն որպէս նախագահ և գանձապահ Սուրբ Լուսաւորիչ եկեղեցու երկսեռ դպրոցների հոգաբարձութեան՝ ուսուցիչներին ուժեղներէր յետ քաջած գրամները, որպէս վճար «Արարատ» ամսագրի, վառն 1895 և 1896 թ. չէ հատուցել ըստ պատկանելից:

5) Նա 1896 թվի ընթացքում ուսումնարանների օգտին պատկանելից ստացած փողերը, որը մօտաւորապէս աւելի է քան 200 թ., չէ վճարել:

6) 1895 թվին Գետաշէնի ժողովրդից ստացել է սրբադրամի արդիւնք, իսկ և պողի գին, ընդամենը 67 թ., բայց չէ հատուցել կառավարութեան, նմանապէս և Սուրբ գիւղի ցորենի և պողի գինը, որ վաղուց է ստացել (1896 թվին) դարձեալ չէ ներկայացրել կառավարութեան:

7) Տէր-Սիմէօն քահանայն կինը մահից առաջ կտակում է գանձապահ քարեգործական նոսրատակի 500 թուղի. 1896 թվին 14 սեպտեմբերի մի յայտարարութեամբ Տէր-Սիմէօնը, որպէս կտակակատար, այդ գումարից առաջարկում է 250 թ. հոգեւոր կառավարութեան և ինքը, որպէս գանձապահ և անդամ կառավարութեան, նոյն յայտարարութեան վրա գրում է՝ «զի սմին նշաւ նակեալ երկու հարիւր յիսուն թուր, գումարի առ իս»։ «Գանձապահ Սիմէօն քահանայ Տէր-Սուրբ Լուսաւորիչ»։ Հոգեւոր կառավարութիւնը 1897 թվ. նոյեմբեր ամսին պահանջում է Տէր-Սիմէօնից այդ գումարը դարձնել կառավարութեան: Տէր-Սիմէօնը պատասխանում է, թէ չէ կարող կատարել հոգեւոր կառավարութեան պահանջը, որովհետեւ իր կինը դեռ կենդանի ժամանակ կտակած փողերը տուել է պարտաւորակով երկու մարդու, որոնցից դեռ չէ կարողացել ստանալ և խոստանում է իրանից լրացնել ոչ այժմ, այլ առաջիկայ 1898 թվ. մարտ ամսին, իսկ եթէ կը կարողանայ՝ չուտով կը վճարէ:

Կան և ուրիշ շատ փաստեր, որ առայժմ դանդաղութեան ենթադրուում են. իսկ եթէ հարկը կը պահանջէ՝ նրանց մասին էլ միւս անգամ կը

խօսենք: Տարակոյս չը կայ, որ հայր Թաւաքաւանց այսպիսի անկարգութիւնները տեսնելով չէր կարող լուրջութեամբ անցնել. բայց և այնպէս նա ծայրալեզ միջոցների չէ դիմում, այլ նախ աշխատում է ընտանեւոր վերջ տալ բոլոր անկարգութիւններին, և երբ համոզվում է, որ այդ միջոցը բարենպօղ մարդկանց վրա չէ ներգործում, վճռում է այդ բոլորի մասին յայտարարութեամբ յայտնել իր իշխանութեանը, իր ստիք բողոքելով վերս մի առ մի թւած չարութիւնները դէմ Հառաւորի է, որ Թաւաքաւանցի այսպիսի վճռական քայլը, բողոքը, չէր կարող թշնամիներ չըտեղծել: Այդպէս էլ լինում է. ինքնավարութիւնը, անձնական նեղ հաշիւները, աշխատում են միմեկի իրար հետ և հայածանք բարձրացնել վարդապետի դէմ: Նախ այդ բողոքն սկսվում է մի խուլ, անվտանգ ձայնով. յետոյ այդ մարդիկ խուլ խօսքի տալով քաղաքիւրում, սրտապնդում են՝ և 5 մարդու ստորագրութեամբ հեռագրով խնդրում Վհա-փառին՝ Թաւաքաւանցին խաղաղ հեռացնել Գանձակից: Իսկ միւս թշնամիները, որոնք քօղարկված են պահում իրանց, և որոնք փաստերի առաջ չընաւում, ոչնչանում են, և որոնց համար բողոքելու ազիւ ճանապարհը փակ է, չեն բաւականանում իրանց արբանեակների՝ Վհա-փառին ուղղած հեռագիր-բողոքով, և իրանց վրէժն առնելու համար՝ չեն խոստարում կեղծ ստորագրութեամբ խնդրել ուղարկել «բառ իւրեանց ձայակի», ուր հարկ են համարում: Բաւական է ասել, որ հեռագիրն ստորագրողները եղել են՝ Աղայ Աղայեանց, Տէր-Սիմէօն ինքնա՛ Մ. Արմանասեանց, որա հաւատարիմ բարեկամ Ղ. Յովհաննիսեանց, Ա. Առուշանեանց, Սուրբ Լուսաւորիչ եկեղեցու նախկին երեցփոխը, որի մասին մտադիր ենք միւս անգամ խօսելու և սրա քրոջ որդի՝ Ա. Մալեանցը: Վարդապետի թագ. Շահապարեանցն է:

Այս բոլորը գրելով հանդերձ՝ մենք շատ հեռու ենք այն մտքից, որ հայր Թաւաքաւանցը, ինչպէս մարդ, ազատ լինի պակասութիւններից. քան լիցի, այդ չէ մեր դիտարկութիւնը. այլ այն՝ որ նա հեռու և ազատ է այն մեղադրանքներից, որ հնարում են նրա դէմ նրա խարդախ թշնամիները:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Վաղաքապատ, սեպտեմբերի 1-ին

Օգոստոսի 13-ին վանական կառավարութեան կողմից մի նամակ ուղարկելի խմբագրութեանը՝ որպէս հերքում «Մշակ» լրագրի № 140-ի մէջ՝ Սուրբա սրբազանի ջուր վաճառելու մասին տպագրված տեղեկութեան: Բայց որովհետեւ այդ հերքումը կրում է իմ ստորագրութիւնը, ինքնա՛ իրում եմ թող տաք «Մշակ» մէջ յայտնել ի գիտութիւն ընթերցողների, հետեւալը. 1) իմ ստորագրութեամբ օգոստոսի 13-ին ուղարկած հերքումը՝ ես գրել եմ Սուրբա սրբազանի թեմապետութեան և տարկածը, որպէս քարտուղար վանական կառավարութեան. 2) ջուր վաճառել է ինքը Սուրբա արքեպիսկոպոս իր ցանկութեամբ և որովամբ միայն, որի մասին վանական կառավարութեան մէջ մինչև լուրի տը պարզվել ոչ խօսք է եղել, ոչ էլ արձանագրութիւն է կապված այդ մասին, և 3) իմ սեփական կարծիքը Սուրբա սրբազանի ջուր վաճառելու մասին բողոքովն այլ է և ես միմեկիսմայն համաձայն եմ «Մշակ» № 140-ի մէջ տը պարզված լուրի ճշմարտութեան հետ:

Յնօք Հանրեկեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վաղ Բօթօմից Թիֆլիս պիտի գայ Կովկասեան նախկին փոխաքայ Ահմ Իշխան Միխայիլ Նիկոլայի: Նորին Բարձրութեան ներկայութեամբ Թիֆլիսում պիտի լինի զորահանդէս:

Երէկ, սեպտեմբերի 14-ին, վախճանվեց Թիֆլիսի Կոստանայ վանքի մայրապետ իշխանուհի Կատերինէ Արղիթեան-Նրկանաբաղուկ, մօտ 78 տարեկան հասակում: Նա ձեռնադրվեց 1836 թվին, Սանահին վանքում, Զարուկին եպիսկոպոսի ձեռքով, իսկ մայրապետութեան պաշտօնի մէջ հաստատվեց Գեորգ IV կաթողիկոսի ձեռքով 1877 թվին: Հանգուցեալ մայրապետը յայտնի էր կոյսերի չըմանում իբրեւ բարի, կարեկցող մի անձն, որ շատ անգամ օգնութեան ձեռք է մեկնել աղքատ և կարօտ աղջիկներին:

Մեղ հարգելու է նա, որ սեպտեմբերի 20-ին, Վաղիկավիկա քաղաքում կը բացվի դիւղատն ուսական ցուցանդէսը: Ցուցանդէսը պէտք է բացվելու աւելի վաղ, այն է սեպտեմբերի 10-ին, բայց գիւղատնտեսների անխորժանութեան և անհոգութեան պատճառով իրենց սկսեցին ուշ ստացվել, ուստի և ցուցանդէսի վարչու-

թիւնը որոշեց՝ բացումը յետաձգել 10 օրով: Ցուցանդէսը պէտք է ունենայ հետեւալ բաժինները՝ այգեգործութեան, զինեղործութեան և վաղապահութեան, սերմաբուծութեան, մեղրաբուծութեան, չերամպահութեան, կաթնատնտեսութեան և անասնապահութեան:

Օգոստոս ամսի 28-ին, լրացաւ ուսուցչ հրօշակաւոր գրող Լէվ Տօլստոյի ծննդեան եօթնամարդնամակը: Այդ առիթով եւրօպայան մամուլը նուրից բազմաթիւ յօդուածներ և յիմադատութիւններ յայտնի ուսուցչի գրականական գործունէութեան:

Հետեւալ լուրն ենք կարդում «Новое Время» լրագրում. «Կովկասեան նախարարիւնարդները դիմել են ֆինանսների մինիստրութեան, ինդրելով թոյլ տալ բանալու նախապիւ շրջաններում՝ բանտների երեխաների համար սկզբնական դպրոցներ, որոնց նպատակը պիտի լինի պատրաստել տեղեկ բանտորներ՝ նախապիւ արդիւնաբերութեան համար»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ուրմիա, օգոստոսի 30-ին

Ասորի ժողովուրդը, օգոստոսի 28-ին, երեկոյեան ընդունեց ուսուցչի խորհրդարանը, — Սուրբա իւր քահանայն, Մար-Իօն Կարիսկոյանը և այլն: Գալը տեղի ունեցաւ յանկարծակի: Գալուց մի քանի րօպէ առաջ, միայն նամակով տեղեկացրին այդ մասին ուսուցչ թալի-բաշի Իսրայէլ Բուդաղեանին. այդ պատճառով ժողովուրդը շատ քշերն էին գնացել դիմաորելու 30—40 ձիաւոր և մօտ 200 հոգի կանայք և մարդիկ: Ուշ լմաց տրվելու պատճառով թալի-բաշին ևս հաղիւ կարողացաւ մի քանի րօպէի մէջ հաւաքել 10—15 պատաւոր հայեր և ձիով գնալ ընդառաջ մինչև Գեարդաբաթ գիւղը: Ռուս հոգեւորականները համար ուղարկված էր կառք: Գալով դէպի քաղաք, 5 րօպէի չափ կանգ առան Գեարդաբաթ գիւղի և Ուրմիա քաղաքի ճանապարհի մէջտեղում, որտեղ ծառերի տակ հաւաքված ժողովրդից եկան համբուրելու ուսուցչի խորհրդարանի ձեռքը: Գալաք հանդիսով՝ հիւր եղան թալի-բաշին: Ռուս միսիօնարութիւնն առ առ գրաւված է պաշտօնական անձանց այցելութեան գնալով:

Օգոստոսի 23-ին ծակեցին մի պարսիկի քիթը, որը բռնվել է անբարոյականութեան մէջ: 2 օր առաջ կտրեցին մի պարսիկի գլուխը, որի յանցանքն էր գողութիւն կատարելը: Այս քանի օրերս դարձեալ կտրուել են մի պարսիկի գլուխը, գողութիւն կատարելու պատճառով: Վ.

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՄԵՑ

Կ. Պօլիս, օգոստոսի 28-ին

Գերմանիոյ կայսեր Նրուալդմ այցելութիւնն, յայտնի է՝ որ Սուրբ Տեղեաց վրայ իբրեւ պահպանութեան իրաւունք ստացող պապական կղերին միջոցներ աւելի կը յուգէ: «Վիլհելմ II, կըսէ լատին կղեր», «ECHO Mensuel de Terre Sainte»-ի մէջ, այն վիճարկում է՝ որ միշտ հնուկը եղած է Գերմանիոյ ճակատագրին վրա. նա հասարակ իշխան մը չէ. նա իր սրտի խորքում գրոյմած է՝ իր երկրի ընդարձակման, և, առ այն՝ իր խաղաղը գերին զօրաւոր զգացումներն: Այս վեհապետն ունի անպիսի յանկարծակի բերումներ՝ որ կը հիացնեն, և խորհրդներ՝ որ չիտթութիւն կը պատճառեն, և չէ կարելի ուրանալ, որ այդ յարափոփոխ քաղաքականութեան ներքեւ, միշտ թաքուն կը մնան՝ տոկոսութիւն մը՝ իր դիտարկութեանց մէջ, և կատարեալ logique մը՝ իր նախադասութեանց մէջ: Ֆրանսիան պէտք է որ այժմէն տեսնէ այն վտանգը, որ կը սպառնայ իր պաշտպանութեանն ու աղեղնութեանը: Կաշտագարութեան է ժամը և մեծ հակողութիւն պէտք է անակնկալներու հանդէպ չի գտնուելու, և կատարեալ խաղաղութեան ժամանակ, անդամների խուսկովեանց ինքնակայ չլինելու համար: Վերջին դարուն մէջ, անհայտ մէկ քանի րօպէր հոգեւոր քիթներու չէինք տանել, այսօր Կանադայի մէջ ամենահիմալի զաղթալայր մը դարձան՝ անգղիական պետութեան ամենին սիրուն և արգաւանդ երկրներն: մին Մարդկային գործերն այնպիսի անդադարձանքներ ունեն, որ ցոյց աղեղնութիւնը շատ երկար տարիներ վերջը կը զգացուի: Ներքեւ քաղաքականութիւնն անտարակոյս արտաքին քաղաքականութեան հակահարուածն ունի, մեղի կ'իյնայ այդ բանը դիմալ և զմեկ խորիւ դատապարտող օտարներուն՝ որ մեր վրայ կը նախանձնէ, սրմակ չնայել, թէ մենք՝ ֆրանսիացիքս, այնպիսի

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13